ՀԲԸՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

>>> ՑԱՆԿԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿ >>> ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐՈՒՄ

# Մեր դասընթացները

Սովորեք հնագույն ազգի լեզուն, նրա դարավոր պատմությունը, մշակութային հարուստ ժառանգությունը, կամ սովորեք շախմատ խաղալ հետևյալ դասընթացների միջոցով.



Հայոց լեզու



Հայոց պատմություն



Հայկական մշակույթ



ԳՏՃՄ

## ՍՈՎՈՐԵՔ
## ՁԵԶ ՀԱՐՄԱՐ ՌԻԹՄՈՎ

- 8 կամ 16-շաբաթյա դասեր կամ տարաժամանակյա ինքնուսուցում
- Դասավանդման յոթ լեզուներ
- Այցելեք www.avc-agbu.org
- Գրանցվեք կամ մուտք գործեք կայք

  Ընտրեք և արձանագրվեք դասընթացին
- Վայելեք ուսումը դասընկերների հետ ամբողջ աշխարհից

Լրացուցիչ հարցերի դեպքում կապ հաստատեք մեզ հետ. enrollment@avc-agbu.org

# 33 000

ՕԳՏԱՏԵՐ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

# ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ԷԼ. ԳՐՔԵՐԻ ՇԱՐՔ

Դիտեք տեսանյութեր, ներբեռնեք եռաչափ նկարներ և համայնապատկերներ, լսեք նկարագրական պատմություններ և հետևեք ժամանակագրական աղյուսակներին՝ նորովի բացահայտելով Հայաստանը:



Ընթերցեք առցանց կամ ներբեռնեք էլ. գրքերը՝ յոթ լեզուներով:




### «Հայկական լեռնաշխարհ»

Էլ. գիրքը ներկայացնում է Հայաստանի աշխարհագրությունը, պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր: Այն ներառում է տեղեկություններ աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, ինչպես նաև վարչատարածքային բաժանման մասին, հարուստ է պատմական հետաքրքիր փաստերով:




### «Բացահայտենք Երևանը»

ինտերակտիվ զբոսաշրջային ուղեցույց է քաղաքի այցելուների համար՝ օգնելու առավելագույնս հետաքրքիր և բազմազան դարձնել նրանց ժամանցը Երևանում և նրա շրջակայքում: Էլ. ուղեցույցն առաջարկում է մեկօրյա կարճ զբոսանքներից մինչև վիրտուալ շրջագայություններ դեպի Երևանի պատմական անցյալ, տոնական ու սոցիալ-մշակութային միջոցառումներ, այլ:




### «Վայոց ձոր»

Էլ. գիրքն ամենաընդգրկուն ինտերակտիվ զբոսաշրջային ուղեցույցն է Հայաստանի Վայոց ձորի մարզի մասին: Այն հասանելի է զբոսաշրջիկների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են այս գեղեցիկ մարզի պատմությամբ, բնական ռեսուրսներով, մշակութային միջոցառումներով և ավանդույթներով:




### «Կումայրիից մինչև Գյումրի»

Էլ. գիրքը յուրօրինակ մուլտիմեդիա ուղեցույց է՝ բացահայտելու Գյումրին՝ վիրտուալ կամ այցի ընթացքում: Այն մանրամասն տեղեկություններ և մուլտիմեդիա պատմություններ է ներառում քաղաքի պատմական և մշակութային ժառանգության մասին, հարուստ է եռաչափ ինտերակտիվ քարտեզներով և գեղեցիկ տեսանյութերով:




### «Մեկդարյա պատմություն. Հայկական բարեգործական ընդհանուր միություն»

Էլ. գիրքը ներկայացնում է ՀԲԸՄ-ի գործունեությունը հիմնադրումից (1906թ.) ի վեր: Արխիվային հարուստ նյութերի, բնօրինակ լուսանկարների, տեսանյութերի և ժամանակագրական աղյուսակների վրա հիմնված երկհատորյակը պատմում է ՀԲԸՄ-ի առաքելության, նրա մարդասիրական գործունեության, դպրոցների, մշակութային և սպորտային կենտրոնների կառուցման մեծ նախագծերի մասին:

## ՀԱՍԱՆԵԼԻ ԱՆՎՃԱՐ

www.avc-agbu.org